ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐ՝ Մ.Մակիչյան
«02» սեպտեմբերի 2025 թ.

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

Հյուսիսային համալսարանում միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառության սահմանված տարեկան ուսման վարձի չափի, վճարման կարգի, գանձման սկզբունքների ու ժամկետների մասին.

ք. Երևան
2025

«Հյուսիսային համալսարան» ՍՊԸ-ն, ի դեմս ռեկտոր Մ. Մակիչյանի մի կողմից, և մյուս կողմից ուսուցման առկա ձևով միջին մասնագիտական կրթական ծրագրի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 1-ին կուրս ընդունված/հիմնական կրթության հիմքով, միջնակարգ կրթության հիմքով/
/փոխադրված, վերականգնված, տեղափոխված, երկրորդ մասնագիտություն ձեռք բերող /ընդգծել/ ուսանող

_____

/անուն, հայրանուն, ազգանուն/

անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցիչները (ծնողը, որդեգրողը կամ հոգաբարձուն)

_____

Այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը Հյուսիսային համալսարանում ուսումնառության, ուսման տարեկան վարձի վճարման և գանձման սկզբունքների ու ժամկետների, ինչպես նաև ուսանողների համար սահմանված արտոնությունների և տուգանքների մասին: Կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, համապատասխան իրավական ակտերով, Հյուսիսային համալսարանի կանոնադրությամբ, ներքին կանոնակարգերով, ինչպես նաև սույն պայմանագրով:

1. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Հյուսիսային համալսարանն իրավունք ունի.

1.1.1. Ուսումնական գործընթացն իրականացնել կրթական ծրագրի պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան՝ համալսարանի կանոնադրությամբ և ներքին կանոնակարգերով սահմանված աշխատակարգով:

1.1.2.Ուսումնական գործընթացի շրջանակներում իրականացնել ուսումնամեթոդական, փորձարարական, հետաձոտական աշխատանքներ:

1.1.3. Հյուսիսային համալսարանի ներքին կարգապահական կանոններին համապատասխան կիրառել պատժամիջոցներ՝ ընդհուպ մինչև ուսանողին համալսարանից հեռացնելը:

1.2. Հյուսիսային համալսարանը պարտավոր է.

1.2.1. Կրթական գործունեության լիցենզիայի հիման վրա իրականացվող կրթական ծրագրի շրջանակներում ուսանողի համար ապահովել մասնագիտական չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսումնառության հնարավորություն, որի ընդհանուր տևողությունը սահմանված է «3» տարի:

1.2.2. Ապահովել ուսանողի ուսման տարեկան վարձի վճարման իրավական և ձևական հիմքերը ըստ կիսամյակների, կանխիկ կամ փոխանցումով վճարելու համար:

1.2.3. Ուսումնական պլանը և ծրագրերը լրիվ կատարելուց, ստուգարքները, քննությունները /այդ թվում՝ ավարտական ամփոփիչ/ դրական գնահատականներով հանձնելուց հետո լինել ուսանողին համապատասխան որակավորում շնորհելու երաշխավորը և ապահովել համապատասխան դիպլոմ ստանալու հնարավորություն:

1.2.4. Ուսանողին իրազեկել իր պայմանագրային պարտականությունների, ինչպես նաև համալսարանում գործող կանոնները և կանոնակարգերը չկատարելու հետևանքների մասին:

2. ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Ուսանողն իրավունք ունի.

2.1.1 Կրթական գործունեության լիցենզիայի հիման վրա համալսարանում իրականացվող կրթական ծրագրով մասնագիտական չափորոշիչների պահանջներին համապատասխան կրթություն ստանալ:

2.1.2. Ուսումնական պլանը և ծրագրերը լրիվ կատարելուց, ստուգարքները, քննությունները /այդ թվում՝ ավարտական ամփոփիչ/ դրական գնահատականներով հանձնելուց հետո ստանալ համապատասխան որակավորում և դիպլոմ:

2.2 Ուսանողը պարտավորում է.

2.1.1 Սահմանված ժամկետում վճարել ուսման վարձը, որը առանց նվազեցումների և տուգանքների ուսումնառության ողջ ընթացքի համար, ըստ կիսամյակների սահմանված է.

		1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս
Վարձի չափը (ՀՀ դրամ)	1-ին կիսամյակ	Մեկ հարյուր հիսուն հազար	Մեկ հարյուր հիսուն հազար	Մեկ հարյուր հիսուն հազար
	2-րդ կիսամյակ	Մեկ հարյուր հիսուն հազար	Մեկ հարյուր հիսուն հազար	Մեկ հարյուր հիսուն հազար

2.2.2 Կատարել կրթական ծրագրով մասնագիտական չափորոշիչների պահանջները:

2.2.3. Պահպանել ՀՀ օրենսդրության, Համալսարանի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների բոլոր պահանջները:

Դիպլոմ ստանալու դեպքում Համալսարանի դրամարկղ է վճարվում 12.000 դրամ, որը չի հաշվարկվում տարեկան ուսման վարձի մեջ:

3. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

3.1. Կիսամյակի ուսման վարձի վճարման վերջնաժամկետ է սահմանվում առկա ուսուցմամբ՝ 1-ին կիսամյակում՝ մինչև սեպտեմբերի 15-ը, 2-րդ կիսամյակում՝ մինչև փետրվարի 15-ը: Յուրաքանչյուր կիսամյակի համար ուսանողի դիմումի հիման վրա, վարձը կարող է վճարվել ամսական, յուրաքանչյուր ամիս կիսամյակային վարձի 20 տոկոսի չափով, որի վերջնաժամկետ է սահմանվում յուրաքանչյուր ամսվա 10-ը: Ուսման վարձը նախատեսված ժամկետում չմուծելու դեպքում համալսարանն իրավասու է համապատասխան հրամանով ուսման վարձի վճարման ժամկետը երկարաձգվել մինչ կիսամյակի ավարտը: Մինչ սույն կետով սահմանված վերջնաժամկետի ավարտը ուսման վարձը չվճարելու դեպքում համալսարանն իրավասու է ուսանողին հեռացնել համալսարանից:

3.2. Ուսանողի ուսումնառության ընթացքում ուսման վարձի զեղչեր կիրառելու համար սահմանված հիմքեր ի հայտ գալու դեպքում զեղչերը կիրառվում են համալսարանի ռեկտորի հրամանով՝ համալսարանի կողմից ուսանողներին պատշաճ իրազեկմամբ՝ առանց սույն պայմանագրի լրացուցիչ փոփոխությունների:

3.3. Այլ հաստատություն տեղափոխվելու դեպքում բարձր առաջադիմության համար կատարված ուսման վարձի նվազեցումները, անվճար ուսուցման ժամանակահատվածի վարձը և կրթաթոշակը հատուցվում են ուսանողի կողմից:

3.4. Ավարտական կամ այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու փաստաթղթերի հատկացումը կատարվելու է միայն ուսման վարձերի պարտքերը մարելու դեպքում: Եթե ուսանողը հեռանում է Համալսարանից իր դիմումի համաձայն կամ հեռացվում է ուսանողական պարտականությունները չկատարելու պատճառով, ապա մուծված վարձի գումարը ետ չի վերադարձվում:

3.5. Ուսանողի հեռացման վերաբերյալ Համալսարանի ռեկտորի հրամանը հիմք է սույն պայմանագրի վաղաժամկետ լուծման համար: Ուսանողը պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծել, եթե նա կամավոր ընդհատում է ուսումնառությունը և այդ մասին դիմում է ներկայացնում՝ վճարելով սովորած ժամանակաշրջանի համար նախատեսված ուսման վարձը: Ուսանողի հեռացման կամ իր դիմումի համաձայն Համալսարանից ազատման ժամանակ ուսանողը պարտավոր է վճարել մինչ պայմանագրի

գործողության դադարեցման պահը Համալսարանում սովորելու համար սահմանված ուսման վարձը, այլապես ուսանողին չի տրամադրվում Համալսարանում նրա ուսումնառությանն առնչվող փաստաթղթերը /տեղեկանք, ակադեմիական թերթիկ, դիպլոմ և այլն/: Վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.6. Պայմանագրի գործողության ժամանակահատված է սահմանվում 2025-2026 ուստարվա մեկնարկից մինչև ուսանողի ավարտելը: Պայմանագրի գործողությունը վաղաժամկետ կարող է դադարեցվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 և 3.5 կետերով նախատեսված դեպքերում:

3.7. Ամփոփիչ ատեստավորմանը չներկայանալու կամ անբավարար գնահատական ստանալու դեպքում ուսանողը կարող է ավարտական կուրսի համար սահմանված վարձավճարի 25 տոկոսի վճարմամբ համալսարանի սահմանած կարգով հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը:

3.8. Կողմերի միջև տեղեկատվության պատշաճ իրազեկում է համարվում համապատասխան փաստաթղթերը առձեռն միմյանց տրամադրելը, սույն պայմանագրով նշված հասցեներով (այդ թվում՝ էլեկտրոնային) ուղարկելը, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ տարբերակներով իրազեկելը:

3.9. Սույն պայմանագիրը բաղկացած է 2 էջից, կնքվում է 2 օրինակից, կողմերին տրամադրվելով մեկական օրինակ:

4. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Հյուսիսային համալսարան» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 15/9
Էլ. Փոստ info@northern.am
հեռ. 010 57 33 17, 010 55 40 52
Հ/Հ 247010055850 «Արդշինբանկ» ՓԲԸ
ռեկտոր՝ Մ. Մակիչյան

_____
/ստորագրություն/
« 02 » սեպտեմբերի 2025թ.

Ուսանող / ուսանողի ծնող 18 տարին չլրացածների համար/
_____
/ազգանուն, անուն. հայրանուն/
_____
/հասցե, հեռախոս, էլեկտրոնային հասցե/
_____
/անձը հաստատող փաստաթղթի տվյալներ/

_____
/ստորագրություն/
« 02 » սեպտեմբերի 2025թ.